Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ՍՑ պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 8. Սյունիքի մարզ– ցերեկային կենտրոն |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2024-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 16.12.2024թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ-հոգեբանական օգնության և իրավաբանական խորհրդատվության տրամադրում,
- ազատ ժամանցի, խմբակների, զբաղվածության, մշակութային միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում,
- աշխատանքային/արտթերապիայի կազմակերպում,
- կենտրոնում սննդի կազմակերպում,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սոցիալ-հոգեբանական օգնության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողը անհատական և խմբային աշխատանքների միջոցով հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրել 42 շահառուի, իրականացվել է շահառուների կարիքների գնահատում և վերագնահատում: Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականցվել է 9 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
  Իրավաբանական խորհրդատվության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել՝ իրենց իրավունքների վերաբերյալ:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուսուցողական, ժամանցային, հիշողության ամրապնդմանն ուղղված խաղերի, հեռուստադիտումների և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
  Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 3 խմբակ, որոնց մասնակցել է 35 շահառու.
    - Ջյուղագործության խմբակ,
    - ասեղնագործության խմբակ,
    - առողջ ապրելակերպի խմբակ:

  Կազմակերպվել է թվով 3 մշակութային միջոցառում, որոնց մասնակցել է 37 շահառու: Իրականացված միջոցառումներն են՝
    - շահառուի ծննդյան օրվա նշում,
    - «Տարեցների միջազգային օր»,
    - Միջոցառում Կապանի երկրագիտական թանգարանում
- Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքային/արտթերապիայի շրջանակներում կազմակերպվել է նկարչաթերապիայի 7 հանդիպում (մասնակիցների թիվ՝ 27 ):
- Կենտրոնում սննդի տրամադրման շրջանակներում յուրաքանչյուր օր սննդային 2 ընդմիջում է կազմակերպվել:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը.

- «Ոչ թե տարեցներ կամ ծերեր, այլ ոսկե սերունդ խորագրով միջոցառում» (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/uiiqzv,
- Միջոցառում Կապանի Երկրագիտական թանգարանում (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/flcquh),
- Փոքրիկ հատված մեր առօրյայից (տե՛ս հետևյալ հղմամբ http://surl.li/ezmnly):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Կապանի սոցիալական աշխատողը հանդիսանալով ՄՍԾՏԿ-ում համակարգվող նիստի անդամ, ակտիվ մասնակցություն է ունեցել համակարգող խորհրդի նիստերին, որտեղ քննարկվել են համայնքի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում չներառված, սակայն աջակցության կարիք ունեցող շահառուների դեպքերը, ուսումնասիրվել եռամսյակային հրատապ օգնություն նշանակելու համար ներկայացված դիմումները, ինչպես նաև հրատապ օգնության տրամադրման ենթակա դեպքերը:
Կապանի սոցիալական աշխատողը մասնակցել է Կապանում կազմակերպված «Բռնի տեղահանված անձանց շրջանում ականներից տուժածների հետ հարցազրույցի վարում, տվյալների հավաքագրում» թեմայով դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ցերեկային խնամքի կենտրոնի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 42/42 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 38 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 12 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 7 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 1 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 11 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 30 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 40 |
| 3. | Կարիքի գնահատում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 20 |
| 4. | Աշխատանքային/արտթերապիայի որոշակի տեսակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 27 |
| 5. | Խմբակների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 35 |
| 5.1 | առողջ ապրելակերպ | 18 |
| 5.2 | շյուղագործության խմբակ | 19 |
| 5.3 | ասեղնագործության խմբակ | 6 |
| 6. | Մշակութային մոջոցառումների կազմակերպում (միայն ցերեկային կենտրոնի պարագայում) | 37 |
| 6.1 | Այդ թվում՝ կենտրոնից դուրս | 9 |
| 7. | Այլ ծառայություն (նշել) | - |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «16» 12.2024թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)